

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՄ

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



Սպագրության գյուտը ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայ իրականության մեջ հեղաշրջող նշանակություն է ունեցել. նրա միջոցով բազմացվել եւ Հանրության սեփականությունն են դարձել, այլ կերպ ասած՝ կորստից են փրկվել հազվագյուտ ձեռագիր մատյանների տեսքով տարբեր գրադարաններում ու վանքերում պահպանվող տարատեսակ գիտական-գրական երկեր, որոնք ներկայացնում են մարդկության պատմությունը, հավատալիքները, նախասիրությունները եւ այլն:

Ժ. Դարի կեսերին Հայ տպագրության արվեստի գործում նշանակալի դեր կատարեց ժամանակի Հայ մտավորականության ամենապայծառ դեմքերից մեկը՝ Ոսկան Երեւանցին: Նրա կյանքի եւ գործունեության մասին տեղեկանում ենք ոչ միայն իր տպագրած գրքերի հիշատակարաններից եւ Առաքել վրդ. Դավրիժեցու «Գիրք Պատմութեանց» երկի Ծէ. գլխից («Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երեւանցւոյ՝ տպագրողի գրոյս եւ այլոց», Ամստերդամ, 1669), այլեւ նրան վերաբերող բավական մեծ գրականությունից¹:

¹ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786. Գ. Զարպիանայան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895. Գ. Լեւոնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1958. Ն. արք. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971. Հ. Ղուկասյան, Ոսկան Երեւանցի (վեպ), երկերի ժողովածու, հ. 2, Երեւան, 1974. Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երեւան, 1974. Կ. եպս. Ամատունի, Ոսկան վրդ. Երեւանցին եւ իր ժամանակը, Վենետիկ-Ս. Ղազար, 1975. Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. Ա., Երեւան, 1977. Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երեւան, 1988. Ս. Ճեմմեմեան, Հայ տպագրու-

Ոսկան Երեւանցին ծնվել է 1614 թ. Սպահանում, տոհմանունն էր՝ Ղլիճենց։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետեւ ծնողներից գաղտնի կրթությունը շարունակել Խաչատուր վրդ. Կեսարացու հիմնած դպրոցում։ 1634 թ. Փիլիպպոս Ս. Աղբակեցին մասնավոր նամակով Ոսկանին հրավիրել է Մայր Աթոռ, որտեղ նա ծանոթացել է կաթողիկ վանական հ. Պողոս Պիրումալիի հետ եւ նրանից սովորել լատիներեն, բնաբանություն, իմաստասիրություն, աստղաբաշխություն եւ երկրաչափություն՝ փոխադարձաբար նրան սովորեցնելով հայերեն։ Ոսկան վարդապետը այս շրջանում ձեռնարկել է մի շարք թարգմանական աշխատանքներ, որոնք մեզ ավանդվել են հայերեն ձեռագիր եւ տպագիր մատյաններով։ Նրա թարգմանիչ լինելու համբավը փաստում են բազմաթիվ հիշատակարաններ. «Հայոց թուականի Ռ. եւ Ճ.երրորդի եւ Է.երրորդի... ստորագրեցաւ... յերկրիս Արարատայ, ի գաւառիս ցԱրագածոտան, նահանգիս Կարբւոյ, ի վայելուչ վանս, որ կոչի Յուշոյ Ս. Սարգիս... դիտապետութեան ուխտիս տեառն Ոսկանի ամէնիմաստ րաբունապետի Երեւանցոյ եւ թարգմանչի, ըստ դաղմատականին...»², «Գրեցաւ ի թվին Փրբ[կ]չի Ռ.երրորդի ԶՃ.երրորդի Ծ. եւ Ը.երրորդի (1658) եւ յամսեանն նոյեմբերի երկակի եւ ի Հայոց թվին Ռ.երրորդի Ճ.երրորդի եւ Է.երրորդի (1658)... ի յերկրին Արարատեան եւ ի նահանգին Կարբւոյ, ի վանայ Ուշոյ Սուրբ Սարգսայ... յառաջնորդութեան քաջ հռետորապետին Ոսկանի թարգմանողի գրամատիկոսի...»³։

Սակայն իր թարգմանություններում նա չի կարողացել պահպանել գրաբարի հարազատությունը, որի պատճառով էլ արժանացել է Մայր Աթոռի միաբանների, անգամ կաթողիկոսի դժգոհությանը։ 1662 թ. Ոսկան վարդապետը, թողնելով Ուշի վանքի վանահայրությունը, մեկնել է Եվրոպա՝ Աստվածաշնչի տպագրության նպատակով։ Երկար թափառումներից, տառապանքներից հետո 1666 թ. նա սկսում է Աստվածաշնչի տպագրության գործը. այդ տարեթիվը հայ մշակույթի եւ տպագրական արվեստի պատմության մեջ նշանավորվեց հայերեն առաջին Աստվածաշունչ մատյանի լույսընծայումով։

Ոսկանյան տպարանը հրատարակեց կրոնական, իմաստասիրական, քերականական աշխատություններ։ Այդ դժվարին տարիներին Ոսկանի կատարած բեղմնավոր հրատարակչական գործունեությունը Լեոն մեկ

թիւնը եւ Հոռմ (ԺԷ. դար), Վենետիկ-Ս. Ղազար, 1989. Մաղաքիա արք. Օրմանյան, Ագգապատում, հ. Բ., Էջմիածին, 2001. Ա. Ալպոյանեան, Տպագրութեան արուեստը եւ Հայք, Երեւան, 2013 եւ բազմաթիվ այլ գրքեր։

² ՄՄ ձեռ. Հ^մ 1832, 158բ։

³ ՄՄ ձեռ. Հ^մ 2274, 72ա։

բառով կոչում է «Հերոսություն»⁴, քանի որ նա, զրկված լինելով դրամական աջակցությունից, բազում զրկանքներ էր կրել օտար երկնքի տակ: Մահացել է 1674 թ.՝ դառնալով իր գործի նահատակը. «Նա առաջին Հայ մարդն էր, որ կանոնաւոր ու յարատեւ դրութիւն ստեղծեց տպարանի համար. նա առաջին Հայ հրատարակիչն էր, որ ունէր համեմատաբար շատ լայն հայեացք իր գործի վրա, որ գիրք տալիս էր ոչ միայն տիրացուին, այլեւ վաճառականին, հասարակ ընթերցողին»⁵:

Իբրեւ ժամանակի հոգեւոր եւ մտավորական գործիչ՝ Ոսկան Երեւանցին թողել է ոչ միայն գրահրատարակչական, այլեւ ձեռագրական հարուստ ժառանգություն, որը նրան դարձնում է մեր մշակույթի կարեւորագույն դեմքերից մեկը:

Ոսկան Երեւանցու ձեռագրական ժառանգությունը ողջ ընդգրկումով չի արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Ոմանք այս կամ այն չափով անդրադարձել են նրա կենսագրությանն ու գրական վաստակին՝ հիմնական շեշտը ուղղելով տպագրական գործունեությանը⁶, իսկ ձեռագրական ժառանգությանն անդրադարձել են այնքանով, որքանով տվյալ պահին թույլ են տվել իրենց հնարավորությունները եւ ուսումնասիրության նպատակը:

Հայ տպագրության նվիրյալ Ոսկան Երեւանցու կենսագրությունն ու տպագրական վաստակը առավել համապարփակ ուսումնասիրված եւ բացահայտված է Կարապետ եպս. Ամատունու «Ոսկան վրդ. Երեւանցին եւ իր ժամանակը» աշխատության մեջ: Սակայն նշենք, որ տասնամյակների վաղեմություն ունեցող այս ուսումնասիրությունից հետո Ոսկան վարդապետի ձեռագրական ժառանգությունը խիստ պետք ունի ամբողջանալու նոր համալրումներով: Հիմք ընդունելով հրապարակում եղած նյութերի եւ ձեռագրացուցակների տվյալները, կարծում ենք, որ ձեռագրագիտական այս նորահայտ տեղեկությունների քանակական եւ գիտա-

⁴ Լեո, Հայկական տպագրություն, հ. Ա., Թիֆլիս, 1904, էջ 275:

⁵ Անդ, էջ 290:

⁶ «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., «Բազմավեպ», Վենետիկ-Ս. Ղազար, 1966, թ. 11-12. «Սիոն», Երուսաղեմ, 1966, թիւ 2-3. Հ. Պ. Անանեան, Ոսկան վարդապետի նամականի, «Բազմավեպ», Վենետիկ-Ս. Ղազար, 1967, թ. 6-8, էջ 130-134. Հ. Պելպլեան, Հոռոմի Ոսկանի հայերէն Աստուածաշունչը ըստ J.-B. van Neercasselի նամակներուն, ՀԱ, թ. 7-9, Վիեննա, 1966, էջ 337-352. Հր. Միրզոյան, Սիմեոն Քուրապեցի եւ Ոսկան Երեւանցի, ԲԵՀ, թ. 3, Երեւան, 1978, էջ 186-192. Ն. Պողոսյան, Ոսկան Երեւանցու ձեռագիր եւ տպագիր թարգմանական երկերի համեմատական վերլուծության փորձ, ԲԵՀ, 138.1, Երեւան, 2012, էջ 52. Հր. Միրզոյան, Ոսկան Երեւանցու ինքնակենսագրությունը, ԲԵՀ 1 (142), Երեւան, 2014, էջ 43-53. Ն. Պողոսյան, Ոսկան Երեւանցու քերականական ժառանգությունը, անդ, էջ 54-67. Հ. Աղախանյան, Ոսկան Երեւանցին եւ հայ վաճառականությունը, էջ 68-75:

կան պատկերները առավել քան բավարար են «լուսավորության առաք-
յալի» ձեռագրական ավանդը նոր քննություն առարկա դարձնելու:

Աշխատանքն իրականացրել ենք՝ առաջնորդվելով տպագիր ձեռագ-
րացուցակների եւ մեր քննությունը պարզած տվյալներով:

Ստորեւ Ոսկան վարդապետի ձեռագրական վաստակը ներկայացնում
ենք հետեւյալ խմբերով.

Ա. ձեռագրեր, որոնց մեջ գետեղված են Ոսկան վարդապետի հեղինա-
կած գործերը,

Բ. ձեռագրեր, որոնցում առկա նյութի կամ նյութերի թարգմանիչը
նա է,

Գ. ձեռագրեր, որոնց կա՛մ գրիչը, կա՛մ ստացողը, կա՛մ միաժամանակ
գրիչն ու ստացողը Ոսկան Երեւանցին է:

Խմբերից յուրաքանչյուրում ձեռագրերը դասակարգվել են ըստ
նյութերի թեմատիկ բովանդակության՝ տաղեր, ճառեր, քերականական-
մեկնողական, աստվածաբանական, պատմագրական, փիլիսոփայական,
որոնցում ժամանակագրական կարգով ներկայացված է Ոսկան Երեւան-
ցու ձեռագրերի ցանկը, ամեն միավորի կարգային համարից հետո նշված
են ձեռագրական հավաքածուն, գույքահամարը, ձեռագրի խորագիրը,
գրչության թվականն ու տեղը, գրչի, ծաղկողի, ստացողի անունները,
ձեռագրի թերթերի կամ էջերի քանակը, նյութը, մեծության եւ գրության
չափը, գրի տեսակը եւ տողերի քանակը, փակագծերում՝ նաեւ ձեռագ-
րում բնագրի զբաղեցրած էջերն ու խորագիրը՝ սկզբնատողով եւ վերջ-
նատողով հանդերձ⁷:

Ա. Հեղինակային գործերը պարունակող ձեռագրեր.

Տաղեր, ճառեր

ա. 1. Երեւանի ՄՄ ձեռ. Հ⁴ 3538, Յովհան Պօնապի կարտինալ, Զեռ-
բածություն, 1757 թ., Ամստերդամ, գրիչ՝ Յովակիմ Ռաֆայելեան Ղա-
փանցի, 168 թ., թուղթ, 20x14.5, միասին (14x8.5), նոտրգիր, 25 տող.

- 165ա-6ա Տաղ Ոսկանայ վարդապետի ասացեալ («ՈՍԿԱՆԻ
ԵՐԵՒԱՆՅԻՈՅ»⁸) - Ողկոյզ պողաւէտ յոստոյն նախ[ն]ւոյ սերեալ /ծառ
նորաբողբոջ ծաղկափրթիթ բերկրեալ... Յորսողէն պահել ըզՄիածնի քոյ
հօտս/, մանաւանդ զերգօղս եւ գովեստիս գրծօղս. ամէն⁹:

⁷ Վերջին տվյալը տալիս ենք միայն այն ձեռագրերի դեպքում, որոնցում գետեղված են
հեղինակային եւ թարգմանական գործեր:

⁸ Այսպես ներկայացնում ենք չափածոների ծայրակապերը:

⁹ **ՅՈՎԻԱՆՆԷԱ ՊՈՆԱ**, Ձեռքածություն յերկինս, Ամստերդամ, 1705, էջ 344-346. «Տաղ Ոս-
կանայ վարդապետի ասացեալ», «Սիոն», Երուսաղեմ, 1966, թ. 2-3, էջ 138. «Էջմիածին»,

2. ՄՄ ձեռ. Հ^մ 6998, Ժողովածոյ, 1839 թ., Ս. Պետերբուրգ, գրիչ՝ Սամոէլ Աբրահամեանց, ստացող՝ պրն Սարգիս Պօղոսով, 100 թ., կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսադրոշմով, 15.5x11, միասին (11x7), նոտրգիր, 17 տող.

- 23բ-4ա Տաղ սուրբ Աստուածածնայ ասացեալ Ոսկան վարդապետէ («ՈՍԿԱՆԻ ԵՐԵՒԱՆՅԻՈՅ»):

բ. Վիեննայի Կայսերական Մատենադարան Cod. Arm. 23, Հաւաքածոյ, 1713 թ., Պերլին, գրիչ՝ Հայերէնագէտն Լաբրոզ, 110 թ., թուղթ նոր, 26x20, երկսին (21.5x15), բոլորգիր, 26-32 տող.

- էջ 58-62 Յաւելուած Ոսկանայ վասն տօնի Զատիկին - Նաեւ ի թուոյ փրկչին ՌՈԿԸ. (1668), իսկ մերում ՌՃԺԸ.ին, նորում տարւոյ գիրն էր Բենն, եւս առաւել պատահեցաւ սղալումն թագաւորի ասացեալ սղալումն բազում պատահի մեզ...¹⁰:

գ. Զմմառի վանքի Մատենադարանի ձեռ. Հ^մ 86 (հին թիւ 73), Տաղարան եւ Հաւաքածոյ, ԺԷ.-ԺԸ. դդ., 228 թ. (450 էջ), թուղթ. սովորական, հաստ, դեղնագոյն եւ ողորկած, 13.3x9.3, միասին (10.5-11.5x6.5), նոտրգիր (մաքուր գրչութիւն), 18-23 տող.

- 2բ «Կտակ իմ Ոսկանայ վարդապետիս, վիպասանօրէն վախճանական բանիւ մնայիւ առ ամենայն հայագինս, յաւէտ առ հոգեւոր հայրն իմ տէր Յակոբ սրբազան կաթողիկոսն ամենայն Հայոց, եւ առ իւրաքանչիւր հոգեւոր պետականսն քաղաքաց ամենից սակս դառնակսկիծ մահուանն իմոյ ի պատճառէ չարեացն չթաղէոսի իրիցւոյ անցուցելոյն ընդ իս եւ ընդ գործարանիս իմոյ ի Մարչիլեայ քաղաքի»¹¹:

դ. 1. ՄՄ ձեռ. Հ^մ 8233, Ժողովածոյ, 1693, 1695, 1783-1787 թթ., ԺԸ. դդ., Թաղէոս առաքեալի վանք, գրիչ՝ Յովհաննէս դպիր (Ա.), Իսահակ Փառակեցի (Գ.), ստացող՝ պրն Անուշ Ռամիսցի (Բ.), 167 թ., թուղթ. լուսագծերով, լուսադրոշմով, 21x16, միասին (16.5x13), նոտրգիր, 23-5 տող.

- 81ա-3բ Յաղագս միութեան եւ միաւորութեան, նոյնք են, թէ զանազանք արարեալ նունոյ Ոսկանայ վարդապետի - Գիտելի է, զի միութիւնն եւ միաւորութիւնն ուր ուրեք ի տեղիս իրերաց դնին... թէ իրօք եւ թէ մտածութեամբ, որպէս մարդն եւ այլք բաղադրեալք եւ Քրիստոսի Աստուծոյն մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

1966, ԺԱ.-ԺԲ., էջ 16 (ի տարբերությունն ձեռագրերի եւ 1705 թ. տպագրի, ամսագրերում ծայրակապի երկրորդ բառի վերջին վանկի «Ի» տառը փոխարինվել է «Ն»-ով):

¹⁰ Յուցակ հայերէն ձեռագրաց Կայսերական Մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1891, էջ 36:

¹¹ Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, կազմեց Մ. վրդ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 174:

2. ՄՄ ձեռ. Հ^մ 9121, Ժողովածոյ, 1732-1733 թթ., Վան, գրիչ՝ Պողոս Վանեցի, 104 թ., թուղթ, 15.5x10, միասին (12.5x8), նոտրգիր, 23 տող.

- 104բ «Յաղագս միութեան եւ միաւորութեան, նոյնք են, եթէ զանազանք արարեալ նունոյ Ոսկանայ վարդապետի» (բնագիրը վերջից կիսով չափ պակասավոր՝ թերթերի կորստի հետեւանքով):

3. ՄՄ ձեռ. Հ^մ 10562, Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, 1744 թ. (°), Օղզիք գիւղաքաղաք (Տայոց երկիր), գրիչ՝ Մովսէս քհն. քհն., 282 թ., թուղթ, 16x11.5, միասին (13.5x9), նոտրգիր, 31 տող.

- 273ա-6բ Յաղագս միութեան եւ միաւորութեան, նոյնք են, եթէ զանազանք արարեալ Ոսկանայ վարդապետի:

Քերականական-մեկնողական աշխատություն.

ա. ՄՄ ձեռ. Հ^մ 2448, Ժողովածոյ, 1687-1689 թթ, Կ. Պօլիս, 244 թ., թուղթ. լուսագծերով, 13x9.8, միասին (10.5x6), նոտրգիր, 18 տող.

- 2բ-35բ Յաղագս նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից, նաեւ արանց դեռեւս ոչ ուսեալ է, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան եւ ի վարժումն ճահապէս ընթերցողութեան. ամէն - Ո՛վ դու մանուկ բարի եւ դեռահասակ...¹²:

Պատմագրական բովանդակությամբ աշխատություն.

ա. ՄՄ ձեռ. Հ^մ 10562, Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, 1744 թ. (°), Օղզիք գիւղաքաղաք (Տայոց երկիր), գրիչ՝ Մովսէս քհն. քհն., 282 թ., թուղթ, 16x11.5, միասին (13.5x9), նոտրգիր, 31 տող.

- 276բ-80բ Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երեւանցոյ տպագրողի գրոյս եւ այլոց - էր սայ ազգաւ հայ, բարեպաշտ ծնողաց զաւակ... եթէ տակաւին մարդկան հաճոյ լինիմ, ապայ Քրիստոսի ծառայ ոչ եմ¹³:

Բ. Թարգմանական գործերը պարունակող ձեռագրեր.

Քերականական-մեկնողական աշխատութիւններ.

ա. 1. ՄՄ ձեռ. Հ^մ 2274, Ժողովածոյ, 1658-1665 թթ., Ուշի վանք, գրիչ՝ Մկրտիչ Աշտարակցի, 331 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսագրողով, 19.8x14.5, միասին (15x10, 18x12), նոտրգիր, 25-32 տող.

¹² Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան, նշվ. աշխ., էջ 43-44:

¹³ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 629-638:

- 4ա-72ա Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցոյ բանի սպասաւորի:

2. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2277, Ժողովածոյ, 1659 թ., Գանձասար, գրիչ՝ Յովհաննէս երէց, 235 թ., թուղթ. լուսագծերով, 13x9, միասին (10x6.5), բոլորգիր (1ա-154ա), նոտրգիր (155ա-234բ), 17-20 տող.

- 1ա-153բ Յաղագս համարին քերականութեան: Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցոյ:

3. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2275, Ժողովածոյ, 1666 թ., 223 թ., թուղթ, 19x12.5, միասին (14x8), նոտրգիր, 26 տող.

- 10ա-94ա Յաղագս համարին քերականութեան: Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցոյ բանի սպասաւորի:

4. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2276, Ժողովածոյ, Ժէ. դ. (1688-ից առաջ), ստացող՝ Դաւիթ վրդ., 326 թ., թուղթ. լուսագծերով, 12.8x9.7, միասին (9.5x6.5), բոլորգիր, 19 տող.

- 3ա-138բ Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցոյ:

5. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 3391, Ժողովածոյ, Ժէ. դ., գրիչը՝ Անդրէաս, Յովսէփ, ստացող՝ Անդրէաս, 425 թ., թուղթ, 16.2x10.2, միասին (10.5x6), նոտրգիր, 21-3 տող.

- 3բ-156բ Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թումայի Իտալացոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցոյ:

6. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2294, Ժողովածոյ, ԺԸ. դ., 322 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, (14.5x10), միասին՝ թ. 1-129 (10.5x6.8), երկսին՝ թ. 130-322 (11.5x8.5), նոտրգիր, 18-9 տող.

- 1ա-127ա Յաղագս համարին քերականութեան:

7. Տյուրինգենի Արքայական համալսարանի գրադարան (այսուհետեւ՝ Տյուրինգեն) Ma XIII 80, 123 թ., թուղթ, 16.5x11, (միասին 13x8-9), բոլորգիր (թ. 1-53), շղագիր (թ. 60-121) 25 տող.

- Bl. 1a-53a, von e. Thomas (aus Italien od. aus Lemberg? Bl. 1a: Թումայի իլօալացոյ = իտալացոյ od. իլօվացոյ?), Übersetzt von Vdp. Oskan aus Eriwan¹⁴:

¹⁴ Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen, von Franz Nikolaus Finck und Levon Gjandschejian, Tübingen, 1907, Bl. 116.

բ. 1. (այլ խմբագրություն) ՄՄ ձեռ. Հ^{4r} 2295⁵, Ժողովածոյ, 1683 թ., Գաղատիեայ, 160 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, 13x9.3, միասին (10x6), նոտրգիր, 18-22 տող.

- 49ա-107ա Քերականութեանց գիրք առաջաւոր:

2. Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք 1266, Ժողովածոյ, 220 էջ, թուղթ հասարակ, 17x12, միասին, նոտրգիր մանր, 28-31 տող.

- էջ 3-74 Քերականութեանց գիրք առաջնորդ¹⁶:

3. Հռոմի Կազանատենսե գրադարան ms. 1941 (ըստ ցուցակի 72), Քերականականք եւ իմաստասիրականք, Ժէ. դ., 183 թ., թուղթ, 14x9, միասին (11.5x6.5), նոտրգիր, 22 տող.

- ff. 1r-55v Քերականութեանց գիրք առաջնորդ¹⁷:

4. Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտ IB, A 81 (ըստ ցուցակի 194), Ժողովածոյ, Ժէ. դ. (1688-ից առաջ), գրիչ՝ Առաքել, 334 թ., թուղթ, 11.5x8.4, միասին, բոլորգիր, 15 եւ 19 տող.

- 2a-25a Յաղագս քերականութեան¹⁸:

Պատմագրական բովանդակությամբ աշխատություն.

ա. լատիներեն. Փարիզի ազգային գրադարան *Nouv. Acq. lat.* 2083 (*Supl. Arm.* 85), Կորյուն, Վարք Մաշտոցի¹⁹:

Փիլիսոփայական բովանդակությամբ աշխատություններ.

ա. 1. ՄՄ ձեռ. Հ^{4r} 1742, Ժողովածոյ, 1646-1653 թթ., Ստաթէ, գրիչ՝ Մկրտիչ քհյ. Լէհացի, ծաղկող՝ Սիմէօն վրդ, Հայրապետ, ստացող՝ Յովհաննէս վրդ., 548 թ., թուղթ. լուսագծերով, 18.7x13.5, միասին (13x7.5), բոլորգիր, 26 տող.

¹⁵ Այս եւ սրան հաջորդող մյուս երեք ձեռագրերը համարում ենք Ոսկան Երեւանցու թարգմանած քերականության այլ խմբագրություն, առավել մանրամասն տե՛ս S. Մանուկյան, Ոսկան Երեւանցու տպագիր քերականության ձեռագիր օրինակները, «Էջմիածին», Զ., 2016, էջ 50-61:

¹⁶ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 4, կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 443:

¹⁷ *Catalogo dei manoscritti Armeni delle biblioteche d'Italia*, a cura di Gabriella Uluhogian, Roma 2010, p. 299-300.

¹⁸ «Православный палестинский сборник», Армянские рукописи в Петербургских собраниях, К. Юзбашян, С.-Петербург, 2005, стр. 102.

¹⁹ R. Kévorkian, A. Ter-Stépanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, Paris, 1998, p. 990, ձեռագրերի հին եւ նոր թվահամարների համեմատական տախտակում հիշատակվում է այս ձեռագրի մասին, սակայն ցուցակի մեջ նկարագրությունը տրված է: Տե՛ս Հ. Պ. Անանեան, Ոսկան վարդապետի լատիներէն թարգմանությունը Կորինի «Վարք Ս. Մաշտոցայ» համառոտ պատմութեան, «Բազմավէպ», թ. 11-12, Վենետիկ, 1966, էջ 273-283:

- 117ա-30բ Գիրք վեց սկզբանց:

2. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 606, Ժողովածոյ, 1668 թ., Էջմիածին, գրիչ՝ Ներսէս (աշակերտ Ստ. Լեհացոյ), 252 թ., թուղթ, 17.5x12, միասին (12x8), նոտրգիր, 27 տող.

- 239ա-49բ Գիրք վեց սկզբանց:

3. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 1806, Ժողովածոյ, 1678 թ., 232 թ., թուղթ. արեւելեան, 19.4x12.6, միասին (14x9), բոլորգիր, նոտրգիր, 31 տող.

- 111բ-34բ Համառօտ հաւաքումն վերլուծութեան Վեցից սկզբանցն գրոց:

4. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 1685, Ժողովածոյ, Ժէ. դ., 216 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, 14.8x10.8, միասին (10.5x6.5), նոտրգիր, 23 տող.

- 53բ-68բ Գիրք վեց սկզբանց:

5. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 1738, Ժողովածոյ, Տաթեւ, Ժէ. դ., գրիչ՝ Ալէքսիանէ, ստացող՝ Յոհան վրդ. Տաթեւացի, 455 թ., թուղթ. արեւելեան, 20.3x14.5, միասին (13x9), նոտրգիր, 28 տող.

- 204ա-13ա Գիրք վեց սկզբանցն:

6. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2333, Ժողովածոյ, Ժէ. դ., 418 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, 20.5x16, միասին (17.5x11), նոտրգիր, 29 տող.

- 69ա-76բ Գիրք յաղագս վեց սկզբանց, արարեալ Ջիլբերթոսի Պոռետացոյ ճեմականի եւ Թարգմանեցեալ ի յումեմնէ բանասիրէ:

7. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 3130, Ժողովածոյ, Ժէ. դ., 367 թ., թուղթ, 19.3x15.1, միասին (13.5x9), բոլորգիր, 29 տող (89բ-98բ Գիրք վեց սկզբանց):

8. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 3214, Ժողովածոյ, Ժէ. դ., 226 թ., թուղթ, 19.4x9.6, միասին (12x7), նոտրգիր, 23-5.

- 211ա-22բ Գիրք յաղագս վեցից սկզբանց, արարեալ Ջիլբերթոսի Պոռետացոյ ճեմականի:

9. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 873, Ժողովածոյ, 1792 թ., Էջմիածին, գրիչ՝ Եսայի Ծարեցի, անանուն, Մովսէս աբղյ, ստացող՝ Եսայի Ծարեցի, 213 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, 16.2x11.1, միասին (14x7), նոտրգիր, 19-21 տող.

- 255ա-70բ Գիրք յաղագս վեցից սկզբանց, արարեալ Ջիլբերթոսի Պոռետացոյ ճեմականի:

10. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 926, Ժողովածոյ, ԺԸ. դ. գրիչ՝ Պետրոս, 288 թ., թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով, 23.2x16.5, երկսին՝ թ. 4-207 (16x11.5), միասին՝ թ. 208-91 (17.5x12), նոտրգիր, 33-5 տող.

- 287ա-91բ Ջիլբերթոսի Պոռետացոյ Վեցից սկզբանց գիրք:

Գ. Գրչագրած, ստացած ձեռագրերը.

Տարբեր բովանդակությամբ աշխատություններ.

ա. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2576, Ժողովածոյ, ԺԶ. դ.²⁰, գրիչը՝ Գրիգոր, Ոսկան, ստացող՝ Նալբանդ Անուշեկ, Տէր Զաքար, 182 թ., թուղթ, 18.5x14, միասիւն (14x11.5), բոլորգիր (թ. 1-175), նոտրգիր (թ. 176-82), 18-38 տող:

բ. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 2368, Ժողովածոյ, 1640-1641 թթ., Ռուսաց երկիր, էջ-միածին, գրիչ՝ Ոսկան վրդ., 502 թ., թուղթ. լուսագծերով, արեւելեան (թ. 497-502), 15x9.8, միասիւն (11.5x6), երկսիւն՝ թ. 13-4 (12x6.2), նոտրգիր, 22 տող:

գ. ՄՄ ձեռ. Հ^{մբ} 1684, Ժողովածոյ, 1643 թ., գրիչ՝ Ոսկան, ստացող՝ Յովհաննէս Մուղնեցի, 385 թ., թուղթ, 14.9x11.1, միասիւն (10x7.5), բոլորգիր, 23-5 տող:

դ. Վենետիկի Մխիթարյան Մատենադարան ձեռ. Հ^{մբ} 310 (ըստ ցուցակի 1044), Գրիգոր Նարեկացի, Ժողովածոյ, 1653 թ., Երեւան, գրիչ՝ Ոսկան վրդ. Երեւանցի, 100 թ., թուղթ, 11x9, միասիւն (8x5.5), բոլորգիր մանր, 18 տող²¹:

ե. Երուսաղեմի Ս. Հակոբյանց ձեռ. Հ^{մբ} 1211, Ժողովածոյ, 1656 թ., Ս. Սարգիս վանք Ուշոյ, գրիչ եւ ստացող՝ Ոսկան վրդ. Երեւանցի, 216 էջ, թուղթ հասարակ, 18x12, երկսիւն, բոլորգիր (էջ 1-50), բոլորգիր եւ նոտրգիր (էջ 51-215), 28 տող²²:

զ. Երուսաղեմի Ս. Հակոբյանց ձեռ. Հ^{մբ} 1173, Ժողովածոյ, ԺԷ. դ., գրիչը՝ Ոսկան դպիր եւ Նիկողայոս աբեղայ, 530 էջ, թուղթ հասարակ, 18.5x12.5, երկսիւն (էջ 3-139, 153-362, 401-528), միասիւն (էջ 140-6, 363-400), նոտրգիր, 25-26 տող²³:

Տաղեր.

ա. 1. ՄՄ ձեռ. Հ^{մբ} ձեռ. 10641, Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, 1641-1642 թթ., գրիչ՝ Ոսկան, ստացող՝ Յոհան պարանպետ, 310 թ., մագաղաթ, 11.5x8, միասիւն (7x4.5), բոլորգիր, 16 տող:

²⁰ Կարծում ենք, որ ձեռագրի թվագրումը ԺԶ. դարով զուտ վրիպակ է, քանի որ համեմատելով ձեռագրի գիրը եւ հաշվի առնելով բովանդակած նյութերը՝ ձեռագրի գրիչը Ոսկան Երեւանցին է, ով ապրել եւ գործել է ԺԷ. դարում:

²¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Զ., յօրինեց Ս. Ճեմմեմեան, Վենետիկ, 1996, էջ 557-560:

²² Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Կ. 4, էջ 348:

²³ Անդ, էջ 271-3 (բովանդակած նյութերը Ոսկանի հետաքրքրությունների շրջանակներում են, Մինաս վարդապետի կնիքի թվականը համընկնում է Ոսկանի բոտն գործունեության տարիներին, այս փաստերը մեզ հիմք են տալիս կարծելու, որ այս ձեռագիրը նույնպես նրա գրչին է պատկանում):

2. ՄՄ ձեռ. Հ^մ 10209, Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, 1643 թ., Էջմիածին, գրիչ՝ Ոսկան, ստացող՝ Մատթէոս վրդ., 271 թ., մագաղաթ, 11.5x8, միասիւն (8x5), բոլորգիր, 20 տող:

Աստվածաբանական բովանդակությամբ աշխատություններ.

ա. 1. Վատիկանի գրադարան (այսուհետեւ՝ Վատիկանի) ձեռ. Հ^մ 39 (նախկին Համար L. III. 2), *Liturgia missae Armena* (Խորհրդատետր պատարագին հայոց), Ժէ. դ. 2-րդ կեսից հետո, գրիչ՝ Ոսկան եպիսկոպոս, Վարդան Յունանեան, 46 թ., թուղթ, 26.3x19.2, երկսիւն, նոտրգիր²⁴:

2. Վատիկանի ձեռ. Հ^մ 52 (նախկին Համար L. III. 24), *Liturgia missae Armena* (Խորհրդատետր պատարագին հայոց), Ժէ. դ., գրիչ՝ Ոսկան եպիսկոպոս, 16 թ., թուղթ, 25.1x18.1, երկսիւն, նոտրգիր²⁵:

բ. 1. Վատիկանի ձեռ. Հ^մ 47 (նախկին Համար L. III. 13), *Calendarium seu Ordinarium Armenorum* (Տոնացոյց հայոց), Ժէ. դ., գրիչ՝ Ոսկան եպիսկոպոս, 83 թ., թուղթ, 22.7x17.7, նոտրգիր²⁶:

2. Վատիկանի ձեռ. Հ^մ 50 (նախկին Համար L. III. 21), *Calendarium seu ordinarium Armenum* (Տոնացոյց հայոց), Ժէ. դ., գրիչ՝ Ոսկան եպիսկոպոս, 107 թ., թուղթ, 26.8x19.6, նոտրգիր²⁷:

3. Վատիկանի ձեռ. Հ^մ 51, (նախկին Համար L. III. 13), *Calendarium seu ordinarium Armenum* (Տոնացոյց հայոց), 1671 թ., գրիչ՝ Ոսկան եպիսկոպոս, 215 թ., թուղթ, 26.3x19.3, նոտրգիր²⁸:

Փիլիսոփայական բովանդակությամբ աշխատություններ.

ա. Տյուբինգենի Համալսարանի գրադարանի ձեռ. Հ^մ Ma XIII 45, Ժէ. դ., գրիչ՝ Ոսկան, ստացող՝ Մարտիրոս (1756 թ.), Պետրոս (1781 թ.), 137 թ., թուղթ, 21.5x15.5, երկսիւն (16x5), շղագիր, 27 տող²⁹:

բ. Տյուբինգենի Համալս. գրադարանի ձեռ. Ma XIII 76, Ժէ. դ., գրիչ՝ Ոսկան եւ Գրիգոր Երեւանցի, 335 թ., թուղթ, 19.5x13, միասիւն (12.5x7.5), շղագիր, 21 տող³⁰:

²⁴ Codices Armeni bybliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani. Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis recensuit Eugenius Tisserant, Bybliothecae Vaticanae scriptor, Romae, 1927, p. 65.

²⁵ Անդ, էջ 79.

²⁶ Անդ, էջ 77.

²⁷ Անդ, էջ 78-79.

²⁸ Անդ, էջ 79.

²⁹ "Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen", Bl. 65-67.

³⁰ Անդ, Bl. 114-115:

Ոսկան Երեւանցու գործերի վերնագրերի այբբենական ցանկ

1. Գիրք յաղագս վեց սկզբանց, արարեալ Զիլբերթոսի Պոռետացւոց ճեմականի եւ թարգմանեցեալ ի յուժեմնէ բանասիրէ (նաեւ՝ Գիրք վեց սկզբանց, Զիլբերթոսի Պոռետացոյ Վեցից սկզբանց գիրք):

2. Կորյուն, Վարք Մաշտոցի (լատիներէն):

3. Կտակ իմ Ոսկանայ վարդապետիս...:

4. Յաղագս միութեան եւ միաւորութեան, նոյնք են, թէ զանազանք արարեալ նունոյ Ոսկանայ վարդապետի:

5. Յաղագս նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից...:

6. Յաւելուած Ոսկանայ վասն տօնի Զատկին:

7. Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երեւանցոյ տպագրողի գրոյս եւ այլոց:

8. Տաղ Ոսկանայ վարդապետի ասացեալ (նաեւ՝ Տաղ Սուրբ Աստուածածնայ, ասացեալ Ոսկան վարդապետէ):

9. Քերականութեանց գիրք առաջին, արարեալ մեծի հռետորին Թուժայի Իտալացւոյ, արտադրեալ ի հայս Ոսկանի Երեւանցւոյ բանի սպասաւորի:

10. Քերականութեանց գիրք առաջաւոր (այլ խմբագրություն):

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ ասենք, որ մեզ են հասել Ոսկան Երեւանցու հեղինակած վեց (պահպանված ինը օրինակով) եւ թարգմանական չորս (պահպանված քսաներկու օրինակով) աշխատություն, իսկ ընդօրինակած-գրչագրած՝ տասնհինգ ձեռագիր, որոնք սփռված են տասը տարբեր ձեռագրական հավաքածուներում:

Այսպիսով, փորձեցինք ներկայացնել Ոսկան վարդապետ Երեւանցու ձեռագրական ժառանգության որոշակիորեն ամբողջական պատկերը եւ համաշխարհային ու մասնավոր ձեռագրական հավաքածուներում «քաջահմուտ ըաբունապետի» գրչագրերի գտնվելը: Նաեւ հուսով ենք, որ մեր այս քննությունը ինչ-որ չափով օգտակար կլինի հեղինակի երկերի բնագրերի համեմատական-քննական կամ գիտական հրատարակության պատրաստմանը եւ առհասարակ հայ տպագրության գործի անխոնջ կազմակերպչի, հոգեւորականի գրական ժառանգության պատկերի ամբողջացմանը:

РЕЗЮМЕ

В развитии армянского искусства печати середины 17-ого века существенную роль сыграл Воскан Ереванци. Он оставил не только печатное, но и рукописное богатое наследие, которое, к сожалению, только частично обратило на себя внимание исследователей и нуждается в новых дополнениях. В данной статье мы попробовали раскрыть полную картину рукописного наследия Архимандрита Воскана, также наличие его трудов в разных международных и частных рукописных коллекциях.

Исследование нововыявленных и опубликованных рукописей позволяет труды Воскана Ереванци подразделить на следующие группы: а) рукописи, в которых включены авторские труды Архимандрита Воскана; б) рукописи, в которых перевод материала принадлежит ему, в) рукописи, в которых он является либо автором, либо получателем, либо же одновременно и тем и другим является сам Воскан. В каждой группе рукописи классифицируются согласно тематике, после чего список рукописей представляется в хронологическом порядке. Таким образом, в десяти разных рукописных коллекциях мы обнаружили шесть авторских трудов Воскана (в девяти экземплярах), четыре перевода (в двадцати двух экземплярах), а также пятнадцать переписанных рукописей.

SUMMARY

In the development of the Armenian printing art of the mid-17th century Voskan of Yerevan played a significant role. He left not only printed, but also handwritten rich heritage, which, unfortunately, only partly attracted the attention of researchers and needs new additions. In this article we shall try to reveal the more or less complete representation of Archimandrite Voskan's manuscript heritage, revealing his works in various international and private manuscript collections.

Research was carried out in accordance with our findings and the published list of manuscripts, according to which Voskan's works are subdivided into the following groups: a) manuscripts, which included the works authored by Archimandrite Voskan; b) manuscripts, the translation of which belongs to him, c) manuscripts, in which either the author or the recipient, or both of them is Voskan. In each group, the manuscripts are classified according to the themes, and then the list of Voskan's manuscripts is represented in chronological order. Thus, in ten different manuscript collections we found six copyright works of Voskan of Yerevan (in nine copies), four translations (in twenty two copies), as well as fifteen rewritten manuscripts.

